Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ <<Մարտունու Տ. Աբրահամյանի

անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ

հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Աշակերտների ներգրավվածության ապահովումը համագործակցային ուսուցումով*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *Ռիմա Համբարձումյան*

ԴՊՐՈՑ՝ *<<Վերին Գետաշենի թիվ 2 մ/դ>>*

Մարտունի-2022

Բովանդակություն

1.Ներածություն.....3

2.Գրական ակնարկ.....4

3.Փորձարարական հետազոտություն.....6

3.1.Փորձարարական դաս-1.....9

3.2.Փորձարարական դաս-2.....8

4.Տվյալների մշակում և վերլուծություն.....11

5. Եզրակացություն.....13

6.Գրականության ցանկ.....14

7.Հավելված.....15

1.Դասապլան-1.....15

2.Դասապլան-2.....18

1.Ներածություն

Աշխարհը փոխվում է արագնթաց տեմպերով անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարահայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ `սխալ:

Արդի ժամանակներում նոր տեխնոլոգիաների կիրառությունը առաջընթաց է խոստանում նրան, ով կարող է մյուսներից ավելի լավ զարգացնել իր կարողությունները: Ընդունակ է գնահատելու, սինթեզելու, վերլուծելու, ստեղծագործելու և դրսևորելու մտքի ճկունությունը:

Ժամանակակից պահանջներին չեն համապատասխանում ստանդարտ , նեղ մտածելակերպով մասնագետները: Այսօրվա հասարակությանը անհրաժեշտ են նախաձեռնող, ստեղծագործական մտածելակերպով բարեկիրթ մարդիկ, ովքեր կարող են ինքնուրույն պատասխանել, լուծումներ գտնել և կանխատեսել դրանց հետևանքները, ընդունակ են համագործակցության, առանձնանում են իրենց շարժունությամբ և հիմնախնդրի կառուցողական մոտեցմամբ: Եվ այս հետազոտական աշխատանքի նպատակը կայանում է նրանում, որպեսզի առարկայի դասավանդման միջոցով խթանել աշակերտների երևակայության ներուժը, ակտիվացնել սովորողների ինքնագործունեությունը, ինքնուրույն աշխատելու կարողությունը, ստեղծագործական մտածողությունը, հնարամտությունը, իմացությունը և պահպանել արդի ժամանակներին համապատասխան աշխատանքով օժտված մրցունակ անհատ.

Նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են հետևյալ փոխկապակցված խնդիրները`

- Ձևավորել հմտություններ աշակերտների հետ նոր մեթոդներով աշխատել.
- Զարգացնել ինքնուրույն աշխատելու կարողություն.
- Համագործակցային աշխատանքի շնորհիվ հասնել նպատակին

Գրական ակնարկ

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Եվ ինչպես արդեն նախաբանում ասվել էր, տեղեկատվությունն ու գիտելիքները որ մի ժամանակ թվում էին հավերժական ու անփոփոխ արդեն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ: Եվ ըստ այդմ կրթության ոլորտի աշխատողները գիտակցում են որ դասավանդման և ուսուցման հնացած ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ , որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում ամիրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ: Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Համագործակցային ուսուցումը դասապրոցեսում ներկայանում է այլընտրանքային մանկավարժական մոտեցում: Այն ենթադրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկապվածության ապահովումը: Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոննելդի հինգն են՝

1. Դրական փոխկապվածություն: Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու , աջակցելու, խրախուսելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը:

2. Դեմ առ դեմ խթանող փոխազդեցություն: Խմբի անդամները համագործակցում են փոխանակում տեղեկություններ , կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են քաջալերում և աջակցում են միմյանց ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն: Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, իր գաղափարով և մտքերով կիսվել մյուս անդամների հետ:

4. Սոցիալական հմտություններ: Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր, անաղմուկ աշխատանք, խոսողին հետևելը, ներկայություն մինչև ավարտը:

5. Խմբային գործընթաց: Խմբի անդամների հաջողությունների , փոխհարաբերությունների համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է:

Դրանք զարգացնում են սոցիալական հմտություններ, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը: Հետագայում այդ տարիներին Պասի Սալբերիի կողմից ավելացվեց փոխներգործուն (ինտերակտիվ առաջադրանք, համագործակցային ուսուցման 6- րդ տարրը:) Նրա կարևոր չափանիշը այն է , որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաներն են՝

- Անձի զարգացում և անհատական ձևավորում.
- Հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովում.
- Սթրեսի հաղթահարում.

Առողջ փոխհարաբերությունների դրսևորում:

Այսպիսով կարող ենք ասել, որ համագործակցային ուսուցման կարևորությունը խմբի անդամների միջև դրական փոխկապվածության ապահովումն է, որը զարգացնում է սոցիալական հմտություններ և ապահովում գործողությունների մասնակցության հետադարձ կապը:

Փորձարարական հետազոտություն

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանը: Դասարանում սովորում են քսաներկու աշակերտ՝ ինը տղա և տասներեք աղջիկ: Քանի որ աշակերտների մոտ թույլ է խոսքի և հաղորդակցման հմտությունները, պատմելու և վերապատմելու ունակությունները, ինչպես նաև կապակցված խոսք կազմելու կարողությունը, որոշեցի ուսուցման ոչ ավանդական (ինտերակտիվ) մեթոդների օգնությամբ՝ զարգացնել ինքնուրույն աշխատելու կարողությունը, ստեղծարարությունը:

Հետազոտական նյութս համընկավ 6-րդ դասարանի ռուսաց լեզու և գրականություն առարկայի ուսուցանվող «Ճանապահորդություն դեպի Հայաստան» թեմայի հետ:

Այս թեմայի ուսումնասիրման համար իմ առջև դրել եմ հետևյալ նպատակները

- Աշակերտը գաղափար կազմի տվյալ թեմայի հասկացության մասին
- վերլուծել նոր թեմային վերաբերյալ բառեր և տերմիններ
- վերլուծել Հայաստանի կլիման ձևավորող հիմնական գործոնները
- պատասխանել այն հարցին, թե ինչու է Հայաստանը իրեն համար հարազատ
- թվարկել Հայաստանի նախկին մայրաքաղաքները
- կարդալ և ինքնուրույն թարգմանել տեքստը պատասխանել
- տվյալ դասի տրված հարցերին
- կազմել ինքնուրույն 2-3 հարց թեմային վերաբրյալ և միմյանց հարց տալ

- գործնական աշխատանք.հանձնարարել յուրաքանչյուր աշակերտին գրել ռեֆերատ և յուրաքանչյուրը գրի Հայաստանին վերաբերյալ մի շրջանի մասին:

Այս ամենից ակնկալում եմ հետևյալ վերջնարդյունքները

- կկարողանա հասկանալ նոր բառերը և արտահայտությունները
- կկարողանա վերլուծել նոր հասկացությունները
- կարողանա վարժ ընթերցել,ճիշտ շեշտադրումով բառերը արտահայտել
- կկարողանա նախկին Հայաստանի մայրաքաղաքների անունները ճիշտ արտասանել
- ռուսերեն կկարողանա ինքնուրույն վերարտադրել տեքստը
- կկարողանա ինքնուրույն պատասխանել հարցերին
- կկարողանա ինքնուրույն հարցեր կազմել նոր ձեռքբերած բառապաշարի հիման վրա
- կկարողանա ինքնուրույն օգտվել համացանցից նոր նյութի ձեռքբերմանը

Սովորողների գործնական կարողությունները և հմտությունները ձևավորելու նպատակով տվել եմ գործնական աշխատանքներ, որոնք սովորողին օգնում են յուրացնել ռուս գրականության առարկան:

Ըստ սովորողի գործունեության ձևի գործնական աշխատանքները բաժանվում են երեք խմբի վերարտադրողական (Ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը) մասամբ որոնողական (երբ սովորողը ոչ միայն սովորել է և ինչկարող է անել,այլև պետք է կատարի լրացումներ և լուծի իրեն տրված խնդիրները) ինքնուրույն վերլուծելու կարողություն (երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդիրների համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ):

Գործնական աշխատանքի միջոցով երեխաների մոտ կարող է առաջանալ ինքնուրույն դատողություն անելու կարողություն, հետաքրքրության ձևավորում, քննարկումներ անելու կարողություն:

Կազմակերպված աշխատանքների շնորհիվ աշակերտը կկարողանա ինքնուրույն որոշումներ կայացնել,գնահատել սեփական աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը: Աշխատանքի համար նպաստավոր պայմանների ստեղծումը հանգեցնում է աշակերտների ինքուրույն ձեռք բերված գիտելիքների քանակի ավելացմանը,հետաքրքրությունների մեծացմանը,հատկապես նրանց համար,ովքեր սովորական դասապրոցեսում ակտիվություն չեն ցուցաբերում: Փորձել եմ իմ ուսուցման գործընթացն այնպես կառուցել ,որ աշակերտը ինքնակատարելագործվի,պատասխանատու լինի,իր առջև դրված խնդիրը լուծելու ունակություն ունենա:

Հետևաբար ես նպատակաուղղված կառուցեցի իմ գործունեությունը ռուսաց լեցու և գրականության դասերին,աշակերտների ինքնուրույնության ձևավորման, հետաքրքրասիրությունների մեծացման համար: Ռուս գրականությունը որպես հումանիտար առարկա,ունի յուրահատուկ հնարավորություններ զարգացնելու անհատականության այնպիսի հատկություններ,ինչպիսիք ենիմանալու և մտածելու արվեստը,հաղորդակցման և խոսքի արվեստը և ինքնահիրացման միտումը:

Կազմել եմ հայտորոշիչ թեստ,որ սովորողների գիտելիքները Հայաստանի և նրա շրջանների թեմայի վերաբերյալ ստուգում: Այս թեստի միջոցով հստակեցվել է ուսուցման ընթացքում սովորողների կարիքները և բարելավել ուսուցման գործընթացը:

Սովորողների գիտելիքները Հայաստան թեմայի վերաբերյալ հարստացնելու,խոսքի ,բառապաշարի զարգացման,ինքնուրույն վերլուծելու կարողությունները զարգացնելու նպատակով հանձնարարել եմ տանը կատարել գործնական աշխատանք:Գործնական աշխատանքի միջոցով երեխաները կկարողանան ինքնուրույն դատողություն անել և պատմել իրենց իսկ կողմից ընտրած Հայաստանի շրջաններից մեկի մասին:

Դասարանում աշակերտները ներկայացրեցին իրենց աշխատանքները և կատարեցինք քննարկում:Կատարվել են նաև խմբային

աշխատանքներ թեմային վերաբերյալ,որտեղ մի խումբը հարցեր էր տալիս,իսկ մյուսը՝ պատասխանում: Աշխատանքը լսելուց հետո պարզեցի,որ խմբերից մեկի աշխատանքը թերի է,մյուսը լավ:Այսպիսի աշխատանքները մեծ հետաքրքրություն են առաջացնում աշակերտների մոտ,ինչը նպաստում է աշակերտների մասնակցության ակտիվությունը: Ինտերակտիվ մեթոդների օգնությամբ աշակերտները կարողանում են միմյանց հետ համագործակցել,միասին քննարկումներ կատարել և գտնել առաջադրված խնդիրների լուծումները:

Այս ինտերակտիվ մեթոդներով աշակերտները ավելի հեշտ են ընկալում նյութը և կատարում համապատասխան առաջադրանքը ի տարբերություն նյութի բովանդակային վերարտադրմանը: Դասերի ընթացքում կիրառել եմ հետևյալ մեթոդները՝ մտագրոհ,ԳՈՒՍ,քարտեզագրում, Т-աձև աղյուսակ,ՓԳՀ-նշաների համակարգ:

Փորձարարական դաս 1

Ես իմ փորձարարական դասը անցկացրել եմ Վերին Գետաշենի ի թիվ 2 միջն դպրոցի 6-րդ դասարանում ՝ Հայաստանի հրաշալի անկյունները (Чудесные уголки Армении) թեմայով:

Թեման բավականին մատչել էր ու հասկանալի: Խթանման փուլում՝ Հայաստանի առանձին վայրերի հասկացության տակ հավաքագրեցի մտքերը, առանց մեկնաբանության: Իմաստի ընկալման փուլում կատարեցինք խմբային աշխատանքի/3 խումբ/, որի միջոցով դասի համապատասխան բաժինները սովորեցին և յուրացրին դասարանում: Կշռադատման փուլում կատարեցի առաջադրանքների հարցադրում: Սովորողները կատարեցին հանձնարարած աշխատանքը:

Աշակերտները պատասխանեցին և ընթանրացրին իրենց տեսակետները արժեքային համակարգի վերաբերյալ: Ամփոփելուց հետո սկսեցինք աշխատել գրատախտակի մոտ փակցրած նկարների միջոցով ներկայացնելով Հայաստանի տեսարժան վայրերը և մշակութային արժեքները: Դասը քննարկելուց հետո գրատախտակին գրվեցին մի քանի արժեքներ արտահայտող բառեր:

Ընդհանուր առմամբ դասն անցավ բավական հետաքրքրված՝ դա էին փաստում աշակերտների մեծ մասի ներգրավվածությունը դասապրոցեսին:Դասի ավարտին կատարեցի գնահատում և տնային հանձնարարություն տվեցի:

Փորձարարական դաս 2

Երկրորդ փորձարարական դասը նույնպես կատարեցի նույն դասարանում՝ հաջորդ դասաժամին : Ընտրված թեման էր < Քաղաքը պատշգամբից> Դասի ուսուցման համար իմ առջև ունեի դրված հետևյալ նպատաները, որ սովորողները կիմանան՝

Խթանման փուլում՝ Հայաստանի մայրաքաղաքների վերաբերյալ հավաքագրեցի մտքերը, առանց մեկնաբանության: Այնուհետև իմաստի ընկալման փուլում T- աձև աղյուսակի կիրառմամաբ կատարեցինք աշխատանք ՝ քաղաքների վերաբերյալ իրենց հայտնած տեղեկությունները գրառեցինք գրատախտակին:Այնուհետև խմբային աշխատանք իրականացրեցինք /3 խումբ/՝, որի միջոցով դասի համապատասխան բաժինները սովորեցին և յուրացրին դասարանում: Կշռադատման փուլում կատարեցի առաջադրանքների հարցադրում: Սովորողները կատարեցին հանձնարարած աշխատանքը:

Աշակերտները պատասխանեցին և ընթանրացրին իրենց տեսակետները արժեքային համակարգի վերաբերյալ: Ամփոփելուց հետո սկսեցինք աշխատել գրատախտակի մոտ փակցրած նկարների միջոցով ներկայացնելով Հայաստանի մայրաքաղաքները և մշակութային արժեքները: Դասը քննարկելուց հետո գրատախտակին գրվեցին մի քանի արժեքներ արտահայտող բառեր:

Ընդհանուր առմամբ դասն անցավ բավական հետաքրքրված՝ դա էին փաստում աշակերտների մեծ մասի ներգրավվածությունը դասապրոցեսին:Դասի ավարտին

կատարեցի գնահատում և տնային հանձնարարություն տվեցի՝ ծանոթանալ և ընթերցել ինքնուրույն հաջորդ տեքստը :

Տվյալների մշակում և վերլուծություն

Յուրաքանչյուր հետազոտական աշխատանք ունի վերլուծության առանձնահատկություններ:Աշխատելով VI-րդ դասարանի հետ,որտեղ սովորում են թույլ և միջին ընդունակություններով աշակերտներ ես ինձ համար բացահայտեցի մի շարք խնդիրներ ,որոնց լուծման իմ առջև դրել էի նպատակներ:

Առաջին դասի ժամանակ ես պարզեցի ,որ կա ինքնուրույն աշխատելու, ինքնուրույն դրսևորվելու թույլ աշակերտներ:

Այդ նպատակով որոշեցի կիրառել. դասի ոչ ավանդական ձևերը նրանց մոտ ստեղծագործական կարողությունները, երևակայությունը,կապակցված խոսք կազմելու,վերարտադրելու կարողությունները զարգացնելու համար:

Յուրաքնչյուր դասից հետո աշակերտների մոտ նկատվել են ակտիվություն,ինքնուրույն դրսևորվելու առաջընթաց,նրանք սկսեցին ավելի ազատ շարադրել իրենց մտքերը: Կարողացան հեշտությամբ աշխատել բնագրի հետ:Գործնական աշխատանքի շնորհիվ նրանց մոտ ձևավորվել է կապակցված խոսք կազմելու,վերարտադրելու կարողություններ:Աշակերտների համար մեծ հետաքրքրություն,ակտիվություն առաջացավ ներկայացնելու իրենց իսկ ցանկության Հայաստանի տարբեր շրջանների մասին գրել գործնական աշխատանք:Սահիկաշարի պատրաստումը նպաստեց նրան,որ երեխաները ավելի ոգևորվեցին;

Ուրախալի էր,որ մրցակցում էին նաև այն աշակերտները, ովքեր ավելի թույլ կարողություններ ունեին:Նրանք ամեն ինչ անում էին,որ կարողանան ավելի մեծ արդյունքի հասնեն: Ակտիվ էին,նպատակասլաց,որի շնորհիվ նրանց մոտ ավելի մեծ աճ գրանցվեց:

Բոլոր աշակերտների հետ կատարվել են գործնական աշխատանք նրանց ինքնուրույն մտածողությունը զարգացնելու,կապակցված խոսք կազմելու,բառապաշարը հարստացնելու նպատակով:Այդ աշխատանքների կատարման տեքստի բովանդակության վերարտադրման համար աշակերտները գնահատվել են:

Աշակերտների արդյունքների հիման վրա կարող եմ նշել,որ հասել եմ իմ առջև դրված նպատակների իրագործմանը և վերջնարդյունքների կատարմանը:Որպես սովորողների երևակայության ներուժ ինքնուրույնության ձևավորման բացահայտումը ռուսաց լեզու և գրականության դասի միջոցով փորձարարական էր և շատ հետաքրքիր:

Կատարված աշխատանքի համատեքստում կիրառված մեթոդները ճիշտ էին ընտրված և ծառայեցին նպատակի իրականացմանը:Կատարված աշխատանքների՝գրավոր աշխատանքներ,առաջադրանքներ և այլն, ինչպես նաև գնահատման արդյունքների հիման վրա կարող եմ պնդել,որ ռուսաց լեցու և գրականություն դասընթացը զարգացնում է սովորողների ինքնուրույն դատողություն անելու կարողությունը, համագործակցային ձևով աշխատելու ունակությունը: Գնահատման արդյունքներով պայմանավորված սովորողների մոտ գիտելիքները գնահատել եմ դրական,որը ներկայացրել եմ գրաֆիկով տես հավելված, ակազմել 1-10 միավորանոց սանդղակ:

Եզրակացություն

Ելնելով տեսական վերլուծությունից և փորձարարական հետազոտության արդյունքների ամփոփից՝ հանգել եմ հետևյալ եզրակացությանը. Ցանկացած առարկայի շրջանակներում մեծ խնդիր է դպրոցահասակ երեխաների մոտ զարգացնել ինքնուրույն գործելու կարողությունը, վերլուծելու, ստեղծագործելու ունակությունը, որպեսզի նա ունենա ուրույն մտածողություն, վառ երևակայություն, ինքնազարգացման ու առաջընթացի մեծ ձգտում:

Իսկ այսօր արդի կրթության նպատակն է ձևավորել համագործակցային հմտություններ աշակերտների մոտ, նոր մեթոդներով աշխատելու ունակություն և ինքնուրույն աշխատելու կարողություն:

Ժամանակակից մեթոդները տալիս են մեզ այդ հնարավորությունները: Ստեղծագործական ներուժ ունեցող երեխաները տարբերվում են իրենց մտածելակերպով ինչպես նաև իրենց տարիքի համար միջինից բարձր ինտելեկտով:

Այսպիսով կատարված աշխատանքից եկա այն համոզման,որ ռուս գրականության դասերը նպաստում է

- սովորողների զարգացմանը,
- ինքնուրույն դատողություն անելու կարողությունը,
- համագործակցային ձևով աշխատելու ունակությունը,
- ձևավորում է քննադատական մտածողություն,
- կապակցված խոսք կազմելու,
- իմացածը վերարտադրելու կարողություն:

Գրականություն

1.Ա.Հովհաննիսյան, Կ.Հարությունյան, Ս.Խրիմյան և ուրիշներ<<Համագործակցությանուսուցում>>Ձեռնարկերևան<<Անտարես>>հրատ.2006 2.Ա.Հովսեփյան,Ա.Գրիգորյան.Մ.ՄանասյանԱշխարհագրություն 6 Ուսուցչիձեռնարկերևան 2013

3.ՁեՖՖ Փեթի,ՍաթընՔոլֆիլդքոլեջ<<Առանցպատմելուդասավանդման 25 եղանակ>>

4.Համագործակցության մանկավարժությունՎ.ՇատալովՆ.Գուզիկ 2006

5.Теория и практика литературного языка. (Москва.1998 г.)

6. Бережнова Е.В, В.В Краевский Основы учебно-исследователской деятельности студентов Москва издат.центр<<Академия>> 2005-128с

7. Johnson.D.Johnson.R. 1999 Learning together and alone cooperative competitive, and individualis tic learning.Boston.Allyn and Bacon

Հավելված

Դասապլան-1

Ուսուցիչ՝ Ռիմա Համբարձումյան

Առարկա՝	**ռուսերեն**	**Ամսաթիվ**		**Դասարան**	6
Թեմա՝	«Ճանապարհորդություն դեպի Հայաստան»				
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան***				
Դասի նպատակը՝	**Սովորողները գաղափար կազմեն տվյալ թեմայի հասկացության մասին: Սովորեն և հասկանան նոր բառեր և արտահայտություններ, կատարեն վերլուծություններ, սերմանել և արժևորել հայրենիքի հանդեպ սեր և հարգանք:**				
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ				

Վերջնարդյունքները	**Աշակերտները կկարողանան.** **Դասի ավարտին աշակերտը կկարողանա հասկանալ նոր թեմայում ամփոփված բառերը և արտահայտությունները և ամրապնդել դրանք:**

Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***	**Կիրառվողմեթոդ (ներ)**
5րոպե-սկիզբ **10րոպե-ընթացք**	**Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:** **Ներկայացնել տնային աշխատանքները** **Պատասխանել հարցերին** *Բաժանվել խմբերի* *Դասի համապատասխան հատվածը սովորել*	**Ողջունել դասարանին, ն/բ:** **Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը** **Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին** **Տալ ուղղորդող հարցադրումներ** **Որից հետո կատարվում է նոր դասի ծանոթություն հարց ու պատասխանի միջոցով**	***Հարցադրումների մեթոդ*** ***Խմբային*** ***համագործակցային աշխատանք***

15րոպե	*թույլ ունակություն ունեցող աշակերտները կատարում են նոր թեմայի վերաբերյալ տրված առաջադրանքները*	**Դասի ընթացքում անցկացվում է զրույց աշակերտների հետ Հայաստանի առանձին վայրերի և շրջանների հասկացության տակ հավաքագրվում են առանձին մտքեր աշակերտների մեկնաբանությամբ:**	***Տարբերակված ուսուցում***
12րոպե	***Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ***	**Բաժանել թեստերը, բացատրել հանձնարարությունները** **Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ:** **Հավաքել տարբերակված թեստերը**	***Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու*** ***աշխարհագրություն, պատմություն, արվեստ)***
3րոպե-ավարտ		**Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի**	

		տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն **Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում**	***Անրադարձ***
Տնային աշխատանք	***Ինքնուրույն ընթերցել , թարգմանել և պատասխանել դասի վերջի հարցերին:***		

Դասապլան-2

Ուսուցիչ՝Ռիմա Համբարձումյան

Առարկա՝	**ռուսերեն**	**Ամսաթիվ**		**Դասարան**	6
Թեմա՝	«Հայաստանի մայրաքաղաքները»»				
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ, կավիճ, դասագիրք, տետրեր, թեստեր, բառարան*** ***Հայաստանի մայրաքաղաքների վերաբերյալ լուսանկարներ***				

Դասի նպատակը՝	**Սովորողները կիմանան Հայաստանի նախկին բոլոր մայրաքաղաքները ըստ պատմական ժամանակաշրջանների և ճիշտ կարտասանեն ռուսերեն:** **Զարգացնել աշակերտի մոտ բանավոր և գրավոր խոսքը:** **Զարգացնել մտածողության, երևակայության և հիշողության կամային որակները: Ճիշտ առոգանությամբ ընթերցել տեքստը:**
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ
Վերջնարդյունքները	**Աշակերտները կկարողանան.** **Դասի ավարտին աշակերտները ը կկարողանան ինքնուրույն պատասխանել տրված հարցերին և նոր ձեռք բերած բառապաշարի հիման վրա կկարողանան ինքնուրույն նոր հարցեր կազմել:**

Գործողություններ(ժամ/տևողություն)	**Ուսումնական գործունեություն** ***Աշակերտներ***	**Ուսումնական գործունեություն** ***Ուսուցիչ***	**Կիրառվողմեթոդ (ներ)**
Տրոպե-սկիզբ	**Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին:** **Ներկայացնել տնային աշխատանքները**	**Ողջունել դասարանին, ն/բ:** **Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը** **Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին**	***Հարցադրումների մեթոդ***

10рոպե-ընթացք **15рոպե** **12рոպե**	**Պատասխանել հարցերին** *Բաժանվել խմբերի* *Դասի համապատասխան հատվածը սովորել* *թույլ ունակություն ունեցող աշակերտները կատարում են նոր թեմայի վերաբերյալ տրված առաջադրանքները* *Գործնականի ներկայացում*	**Տալ ուղղորդող հարցադրումներ** **Որից հետո կատարվում է նոր դասի ծանոթություն հարց ու պատասխանի միջոցով** **T աղյուսակի մեթոդով, այս փուլում հարցերի , զրույցի և մեկնաբանության միջոցոց նոր ինֆորմացիա են ստանում Հայաստանի մայրաքաղաքների մասին:** **Դասի ընթացքում անցկացվում է զրույց աշակերտների հետ Հայաստանի մայրաքաղաքների վերաբերյալ հասկացության տակ հավաքագրվում են առանձին մտքեր աշակերտների մեկնաբանությամբ:** **Կատարվում է առաջադրանքների հարցում , որտեղ սովորողները կատարում են ուսուցչի կողմից տրված առաջադրանքները դասը ավելի լավ յուրացնելու համար:**	***T-աձև աղյուսակ*** ***Հետազոտական խմբային մեթոդ*** ***Խմբային*** ***համագործակցային աշխատանք*** ՝ ***Կարճ դասախոսություն՝ստեղծելով***

Յրոպե-ավարտ	***Լուռ լսել դասը , կատարել նշումներ, հնչեցնել անհասկանալի հարցեր, աշխատանք դասագրքի հետ***	**Բաժանել թեստերը, բացատրել հանձնարարությունները** **Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանվոր, գրավոր հետադարձ կապ:** **Հավաքել տարբերակված թեստերը** **Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն** **Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում**	***Միջառարկայական կապ(հայոց լեզու*** ***աշխարհագրություն, պատմություն, արվեստ)*** ***Անրադարձ***
Տնային աշխատանք	***Ճանոթանալ և ինքնուրույն ընթերցել դասագրքի հաջորդ տեքստը « Քաղաքը պատշգամբից»:***		